ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 10.01.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
Գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Է. Համբարձումյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժնմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի, որի կողմից 8-րդ չափաբաժնի մասով ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է տեխնիկական բնութագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ը: Ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 14.01.2019թ. ծանուցել մասնակցին սահմանված կարգով շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունները:
Քանի որ 09.01.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 4000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որոնք գերազանցում են «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի կողմից 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկների մեկ տոկոսը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:
Քանի որ Eauction համակարգը թույլ չէր տալիս «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով մերժել ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքերով, ուստի լիազոր մարմնին հետադարձ կապով խնդրի լուծման վերաբերյալ խնդրանք է ներկայացվել: Լիազոր մարմնի կողմից տրամադրված պարզաբանման հիման վրա, որպես խնդրի միակ լուծում, գնահատող հանձնաժողովը **www.eauction.armeps.am** կայքում «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի կողմից 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար, որից հետո վերջինիս համակարգի կողմից ավտոմատ եղանակով ծանուցում է ուղարկվել՝ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Անհամապատասխանությունների շտկման համար Օրենքով նախատեսված մեկ աշխատանքային օրվանից հետո գնահատող հանձնաժողովը կրկին անգամ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի կողմից 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար: Արդյունքում «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով մերժվել է: Հետևաբար «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ն 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և ծանուցվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, իսկ 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվել է չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):
Քանի որ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք՝ ծածկագիրը ԳԲՔԱ-ԱՄ-2019/08, համաձայն որի ընկերությունը բողոքարկում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իր ներկայացրած հայտը մերժելու մասին որոշումը, ուստի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կասեցվել է:
Համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի առ 29.01.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/08 որոշման՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցվել է: Հետևաբար 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող:

1.2 01.02.2019թ. ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ի, 7-րդ չափաբաժնի մասով «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ:

Քանի որ 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն eauction.armeps.am համակարգում մասնակցի հայտը մնացել է մերժված, ուստի առ 04.02.2019թ. ԴՎԱ/446 գրությամբ լիազորված մարմին ներկայացվել է խնդրանք տվյալ տեխնիկական խնդրի լուծման վերաբերյալ;

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/39» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող Գ. Ռատյան

Գնահատող Վ. Պապյան

Գնահատող Է. Համբարձումյան

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան